



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՄՈՒՐԲ ԷՋԱԽԱԾՆԻ ԳԵՂԱՐԳՅԱՆ ՀՈԳԵԿՈՐ ՏԵՄՈՒՆԸ.  
ՀԻՄՆԵՐ Է ԳԵՂԱՐԳ Կ ՄԵԾՈՒԳՈՐ ԿԱԹՈՐԻԿՈՍԸ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ

*Որ մահկանացու ծնեալ՝  
անմահ զհարն յիշարակ եթող:  
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ*

Մեր պարամոթյունը, բարեբախտաբար, հարուստ է նման անմահ հիշարակներով, որոնց թվին պետք է դասել և հայոց Եկեղեցու պարամոթյան նոր շրջանի պայծառ և նշանավոր ղեմներից Գևորգ Դ Կաթողիկոսի (կթղ. 1866-1882 թթ.) գործունեությունը, որի համար նա իրավամբ վաստակեց «Մեծագործ» անունը: Այս գործունեության մեջ առանձնանում են հարկապես Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնադրումը և «Արարաբ» ամսագրի հրատարակությունը: Երկու իրագործումներ, որոնք հրամայական անհրաժեշտություն էին 1870-ական թթ. հայ կյանքում և, հայ ժողովրդի մրավոր վերածնությանը ծառայելուց բացի, նպաստեցին նաև համահայկական համախմբվածությանը:

Այս շրջանում թեև հայ լրագրությունն արդեն զարգացման մի նոր շրջան էր թևակոխել, սակայն հայոց Ընդհանրական Աթոռի ամսագիրը ոչ միայն ողջ հայությանն էր ուղղված, այլև համահայկական ընդգրկում ուներ:

Նույն ձևով թեև այս շրջանում գործում էին Ժառանգավորաց մի քանի վարժարաններ և վանական կենտրոնների դպրեվանքեր, սակայն նրանք հիմնականում սաներ էին ընկրում, ապա և հոգևորականներ պարրաստում իրենց վարչական իրավասության շրջանակում գրավող եկեղեցական փճակների համար: Եվ բազմափեղկված աշխարհասփյուռ հայության համար Գևորգյան հոգևոր ճեմարանը դարձավ ոչ միայն մի նոր, իր դասավանդման

որակով և աստիճանով նմանը չունեցող հոգևոր ուսումնական, այլև համահայկական մի հասարակություն, ուր ի մի հավաքվեցին աշակերտներ Արևելյան ու Արևմտյան Հայաստաններից, հայ գաղթավայրերից՝ Նոր Նախիջևանից ու Աստրախանից մինչև հեռավոր Կուփինա (Քրոթահիա), որը ջնարակության իր արվեստից հեքո երկրորդ անգամ հռչակվելու էր 12 փարեկանում Ճեմարան եկամ ապագա Կոմիտաս վարդապետով:

Պարույր Սևակի գեղեցիկ բնորոշմամբ՝

Ճեմարանի բակում արձակ,  
Որպեղ էլ որ աչք ես ածում  
Զարմանալի հավաքածու  
Խոսվածքների, փարագների ...

Եվ ահա միմյանցով հարստացած և միմյանցով հայ աշխարհին ու հայ գաղթաշխարհի հոգեբերին հաղորդ էին դառնալու և Ս. Էջմիածնի լույսով լցվելու՝ այնուհետև Հայ Եկեղեցուն իրենց սպասավորությունը բերելու համար պարարաստվող սաները:

Ճեմարանի հիմնումից կարճ ժամանակ անց նրա հետագա ընթացքը միահյուսվելու էր Մայր Աթոռի կյանքին և Հայոց Հայրապետական Աթոռի գործունեությանը: Ճեմարանը նախ կիսելու էր Ս. Էջմիածնին բաժին ընկած հարվածները, իր գոցված դռներով ասես ավելի լսելի էր դառնալու Մայր Աթոռի պարսպադրված առժամյա լույթունը, և ապա Ճեմարանի վերաբացումը ազդարարելու էր նոր վերհասնումը Հայոց Հայրապետական Աթոռի:

Քնորգյան Ճեմարանը, սկսյալ իր մեծ հիմնադրից, իրենում կրում է և՛ անցնող ժամանակների, և՛ այս ընթացքում գահակալած Հայրապետների շունչը՝ որպես մի համաձուլվածք Խրիմյան Հայրիկի առաքելական ոգու և ջերմ հայրենասիրության, Քնորգ Հինգերորդ Կաթողիկոսի անկտրում ոգու ու վշտաբեկ սրտի, Քնորգ Վեցերորդի խոհեմության և Վազգեն Վեհափառի պայծառության ու իմաստունության, Գարեգին Առաջինի հոգևմտավոր ճառագայթումների և Հայոց Հայրապետական Աթոռի այժմյան գահակալ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնող ոգու և կառուցողական իրագործումների, որոնք խարսխված են Հայրենիքի բարօրության և հզորացման ու աշխարհասփյուռ հայության ազգային-հոգևոր դիմազծի պահպանության մեր Մեծագործ Հայրապետների փեսականի վրա:

Եվ այսօր խորհրդանշական է, որ իրար միահյուսված ենք նշում Քնորգյան Հոգևոր Ճեմարանի հիմնադրման 130-ամյակը և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության հինգերորդ փարեղարձը: Վեհափառ Հայրապետը մեր այն Կաթողիկոսներից է, որոնց կյանքն ու հոգևոր գործունեությունը սերտորեն կապված է Ճեմարանին: Դեռևս դպրոցական ապագա Հայրապետը ուսանելու է գալիս Ճեմարան, այնուհետև դառնում Ճեմարանի դասախոս և վերակացու:

Ճեմարանը գորացնելու և հայ հոգևորականության նոր սերունդ պարարաստելու մտահոգությամբ՝ Նորին Սրբությունն Արարաբյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ եղած շրջանում 1989 թ., հիմնում է Սևակի Դպրանոցը, որն այնուհետև, ի հիշատակ Վազգեն Առաջինի, վերանվանվելու էր Վազգենյան:

Կաթողիկոսական ընտրություններից անմիջապես հետո Նորին Սրբությունը ձեռնամուխ եղավ ճեմարանական կրթության վերակազմակերպմանը՝ համաձայն ժամանակի առաջադրած խնդիրների, և այսօր Գևորգյան ճեմարանը մի անդաստան է, որի հունձքը Ս. Էջմիածնում կատարվող ձեռնադրություններով Հայոց Եկեղեցու միջոցով ընծայվում է հայ ժողովրդին:

Ճեմարանական հիմնում ասվում է.

*Մեծ տեսիլքի մենք գավակներ:*

Եվ Վեհափառ Հայրապետը որպես ճշմարիտ ճեմարանական, այդ մեծ տեսիլքը իր գահակալության այս հինգ փարիներին բոլորանվեր կերպով իրականացնում է մեր ազգային եկեղեցական կյանքի ամենափարբեր բնագավառներում կատարվող իրագործումներով, որոնցից շարերի թվարկումը կարող ենք սկսել «պարմության մեջ առաջին անգամ» բառերով:

Այսպես, պարմության մեջ առաջին անգամ Հայաստանի հանրակրթական դպրոցներում սկսեց դասավանդվել «Հայոց եկեղեցու պարմություն» առարկան: Բանակում կանոնակարգվեց Ս. Էջմիածնի միջոցով իրականացվող հոգևոր սպասավորությունը, որը սկսվել էր երջանկահիշարակ Գարեգին Առաջինի գահակալության շրջանից: Բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ ստացավ Գևորգյան Հոգևոր ճեմարանը: Ընթանում է եկեղեցական-թեմական ներքին կյանքի վերակազմակերպումը, աննախադեպ եկեղեցաշինությամբ նորաօծ եկեղեցիների շուրջը ձևավորվող համայնքներով: 1700-ամյակի շրջանակում և հաջորդող փարիներին անցկացվեցին իրենց ծավալով և ընդգրկմամբ մինչ այդ նախադեպը չունեցող միջոցառումներ:

Միջեկեղեցական հարաբերությունները ևս նշանավորվեցին իրադարձություններով, որոնք վերստին բնորոշվում են նույն արտահայտությամբ՝ պարմության մեջ առաջին անգամ: Այս շարքում հիշարակելի է հարկապես Հռոմեական Եկեղեցու Սրբազան Բահանա-յապետ Հովհաննես Պողոս Երկրորդի այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ինչպես նաև՝ քույր եկեղեցիների հոգևոր առաջնորդների՝ մինչ այդ նմանը չունեցող համախմբումը Ս. Էջմիածնում 1700-ամյակի եզրափակիչ հանդիսությունների շրջագծում, միջեկեղեցական հարաբերությունների աննախադեպ աշխուժացումը, որի արտահայտություններից է և բազմաթիվ ճեմարանավարների՝ իրենց ուսումնառությունը արտասահմանյան հոգևոր-ուսումնական հաստատություններում շարունակելը:

Որքան շար է կատարվածը, նույնքան առավել են և այն ծրագրերը, որոնք կյանքի են կոչվել Վեհափառ Հայրապետի կողմից այս հինգ փարիների ընթացքում և որոնց արդյունքը աստիճանաբար կերևա առաջիկա փարիներին:

Նորին Սրբությանը ի խորոց սրտի շնորհավորելով գահակալության հինգերորդ փարե-դարձի առիթով՝ մաղթում ենք, որ առաջիկայում ևս Գևորգյան Հոգևոր ճեմարանի ու Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության իրար միահյուսված հոբելյանները հաջորդեն միմյանց՝ ճեմարանի նորանոր հաջողությունների արձանագրմամբ և Վեհափառ Հայրապետի կատարած նոր իրագործումների թվարկմամբ: